ՄՆԱՑ ԱՆՄԱՀ



ՄԱՐԱՏ ԳԱՌՆԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
(1972-1994)

Մարատ Գառնիկի Մխիթարեան: Շատերի նման նա էլ ապրում էր իր ժողովրդին եւ հայրենիքին ծառայելու նշանաբանով: Բազում են հայրենիքին ծառայելու ուղիները, եւ բնաւ պարտադիր չէ այն պատկերացնել որպես միայն զէնքով ծառայել:

Սակայն երբ հայրենիքը վտանգի մէջ է ու կանչում է իր զաւակներին, հայրենիքին ծառայելու նշանաբանով ապրողները առաջինն են զէնք վերցնում եւ իրենց պարտքը կատարում ռազմի դաշտում: Կեանքի գնով: Այդպէս ապրեց Մարատը: Իր նշանաբանին հաւատարիմ՝ ապրեց, մարտնչեց ու զոհուեց հայրենիքի համար: Ընկաւ իր հայրենիքի համար: Ընկաւ իր հայրենիքի ու ժողովրդի համար: Ընկաւ իր նոր ծնուած որդու՝ Նարեկի համար: Զոհուեց, սակայն մնաց անմահ իր հայրենասիրութեամբ ու նուիրուածութեամբ:

Մարատը ծնուել էր 1972 թուականին, Երեւանում: Նա ընտանիքի անդրանիկ զաւակն էր: Խելացի, ուշիմ եւ համեստ բնաւորութիւն ունէր: 1993ի Մայիսին զօրակոչուել է բանակ: Չի՛ երկմտել. միանգամից ներկայացել է զինկոմիսարիատ: Սկզբնական շրջանում ծառայում էր Երեւանի զօրամասերից մէկում, իսկ 1994ի Ապրիլին ուղարկեցին սահմանամերձ գօտի:

Մայիսի 7ն էր. ընդամէնը 13 օր էր անցել, ինչ գտնուում էր կռուի դաշտում: Նոր էր վարժուել մարտական գործողութիւններին, սակայն առաջին իսկ մարտերից մէկը Մարատի համար դարձաւ ճակատագրական: Թշնամու արձակած գնդակը անվրէպ էր:

Մարատի եւ նրա զոհուած ընկերների արեան համար թշնամին թանկ վճարեց, մեծաթիւ զոհեր տուեց, արժանի հակահարուած ստացաւ: Մարատը չհասցրեց անել այն ամէնը, ինչի կոչուած էր, ինչի ընդունակ էր: Չհասցրեց ամբողջութեամբ իրագործել իր նշանաբանը: Ճակատագիր էր. կարճ ապրեց ու կարճ կռուեց: Սակայն իր կարճ կեանքի ու կռուի ժամանակ եղաւ հայրենիքի արժանի զաւակ:

Մարատի ծնողները, ուսուցիչները հպարտանալու իրաւունք ունեն: Հպարտանալու իրաւունք ունենք բոլորս՝ այն ազգը, որ այդպիսի զաւակներ ունի:

Լիանա Սէյրանեան

«Երկիր», 2 Օգոստոս 1994